ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Հ. Ա. ՕՐԲԵԼՈՒ ԾՆՆԴՅԱՆ 100 ԱՄՅԱԿԻՆ

Ս/թ նոյեմբերի 12—13-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում և Ծաղկաձորի մարզական համալիրի շենքում տեղի ունեցավ գիտական նստաշրջան նվիրված անվանի արևելագետ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Արդարի Օրբելու ծննդյան 100 ամյակին։

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Ակադեմիկոս Հ. Օրբելին, ասաց նա, մեծատաղանդ փայլուն գիտնական էր, որի գիտական, գիտակազմակերպչական և հասարակական գործունեությունը զարմանալի լայն ընդգրկում ուներ։ Նա հայագետ էր, կովկասագետ, արևելագետ։ Հ. Օրբելին գիտեր անմնացորդ նվիրվել գործին և առավելագույն չափով ուժերը լարել որևէ աշխատանք կատարելու համար։ Արդեն նախասովետական շրջանում ճանաչված գիտնական Հ. Օրբելին մեծ Հոկտեմբերից հետո իր ուսուցիչ Ն. Մառի հետ անվերապահորեն անցավ հեղափոխության կողմը՝ պատրաստակամ ծառայելու գիտության և մշակութային շինարարության բնագավառում նրա առաջադրած նոր խնդիրներին։ Հեղափոխությունը լայն ասպարեզ բացեց գիտնականի առջև և կոփեց նրան իբրև գիտության խոշոր կազմակերպչի։ Հսկայական է Հ. Օրբելու դերը հայագիտության զարգացման գործում, անգնահատելի նրա գիտակազմակերպչական վաստակը Սովետական Հայաստանում գիտության զարգացման բնագավառում, շեշտեց Վ. Հ. Համբարձումյանը։ 1943 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրը, տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադիր ժողովը, որտեղ Հ. Օրբելին ընտրվեց պրեզիդենտ։

Այնուհետև Վ. Համբարձումյանը հուշեր պատմեց Հ. Օրբելու մասին, շեշտեց իբրև մարդու և գիտնականի նրանից ստացած իր վառ տպավորությունները, նրան բնութագրեց իբրև մեծ ինտերնացիոնալիստի, որը բացառիկ հարգանք էր տածում ժողովուրդների բարեկամության և նրանց մշակութային ժառանգության նկատմամբ։

Այնուհետև «Հ. Ա. Օրբելին ականավոր հետազոտող, գիտության կազմակերպիչ և հասարակական գործիչ» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին։ Նա նկատեց, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Հ. Օրբելին իրեն ամբողջությամբ նվիրեց սովետական արևելագիտության զարգացմանը։ Նրա կյանքում շրջադարձային էր 1920 թվականը, երբ աշխատանքի անցավ Պետական էրմիտաժում, իբրև նոր կազմակերպված Արևելքի բաժնի վարիչ։ Դրանով իսկ սկսվեց Հ. Օրբելու կյանքի էրմիտաժյան ավելի քան 30-ամյա շրջանը։ Իր ողջ եռանդն ու գիտելիքները նա ի սպաս դրեց Պետական էրմիտաժի վերականգնմանն ու ընդարձակմանը։ Փայլուն կազմակերպչի, հայրենասեր քաղաքացու, գիտնականի տաղանդն ամբողջովին ի հայտ եկավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ նա անսպառ եռանդ ցուցաբերեց էրմիտաժի գանձերը փրկելիս։ Պաշարման դաժան օրերին անգամ էրմիտաժում Հ. Օրբելու գլխավորությամբ գիտական աշխատանքը չէր դադարում։ Արդեն 1944 թ. հունիսին, շարունակեց զեկուցողը, նա ձեռնամուխ եղավ էրմիտաժի վերականգնմանը։ Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների ավարտից հետո է, որ Հ. Օրբելին վերադարձավ իր կիսատ թողած գիտական աշխատանքներին, որոնք չէր ընդհատել անգամ պաշարման օրերին։ Ամփոփելով իր խոսքը, Բ. Բ. Պիոտրովսկին նշեց, որ Հ. Օրբելին ականավոր արևելագետ էր, սովետական գիտության ու թանգարանային գործի անվանի կազմակերպիչ, որը էրմիտաժը բարձրացրեց համաշխարհային մշակույթի պատմությունն ուսումնասիրող խոշորագույն գիտական կենտրոնի մակարդակի։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանի զեկուցման թեման էր՝ «Հ. Ա. Օրբելին հնագետ—հետազոտող»։ Նա նշեց, որ Հ. Օրբելին իր ստեղծագործությամբ, գործունեությամբ ու բնավորությամբ ըստ ամենայնի այլի ընկնող անհատականություն էր, բազմակողմանի, բազմատաղանդ ականավոր գիտնական։ Հսկայական է Հ. Օրբելու ավանդը միջնադարյան Հայաստանի նշանավոր մայրաքաղաք Անիի պեղումների գործում։ Նա 1906 թ. Ն. Մառի կողմից հրավիրվելով մասնակցելու Անիի պեղումներին, շուտով դարձավ իր ուսուցչի աջ թևն ու մերձավոր օգնականը։ 1911 թ. լույս տեսավ Հ. Օրբելու «Անվանավերակները» գրքույկը, որը Անիի պատմությա-

ներ, հուշարձանների վիճակին և պեղումների արդյունքներին նվիրված առաջին ընդհանրացնող գիտական աշխատությունն էր։ 1911 թ. նա ուսումնասիրեց Արևմտյան Հայաստանի մի շարք հուշարձաններ, իսկ մինչ այդ՝ 1909 թ., նա Խաչենում (Լեռնային Ղարաբաղ) հետազոտել էր տեղի հայկական հուշարձանները, 1915 թ. հրատարակելով «Խաչենի խաչքարերի կենցաղային ռելյեֆները» հոդվածը։

Անիում, Խաչենում և Արևմտյան Հայաստանում Հ. Օրբելու հնագիտական աշխատանքներն արժանանում են բարձր գնահատականի և 1912 թ. նա ընտրվում է Ռուսական հնագիտական ընկերության անդամ։ 1915 թ. Հ. Օրբելին հնագիտական պեղումներ է կատարում Ղրիմում, իսկ 1916 թ.՝ Վանում, որտեղ ժայռերից մեկի խորշերում հայտնաբերում է Արգիշտի II-ի մեծածավալ տարեգրությունը։ Ջնայած Հ. Օրբելու գիտական հետաքրքրությունների բազմակողմանիությանը, շարունակեց Բ. Ն. Առաքելյանը, հնագիտությունը նրա նախընտրած բնագավառն էր և 1928—1929 թթ. նա պեղումներ է կատարում Դաղստանում։ Ապա Հ. Օրբելին գալիս է Հայաստան՝ հայկական հնագիտական և ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության նպատակով, իսկ 1930 թ. հետազոտություններ է կատարում Ուրալում։ 1936 թ. նա ձեռնարկում է Անբերդի պեղումները, որոնք, չնայած նույն տարում ընդհատվելուն, մեծ արդյունքներ տվեցին։ Վերջում Բ. Ն. Առաքելյանը նշեց, որ Օրբելին մեծ ավանդ է ներդրել թե՛ սովետական հնագիտության զարգացման, թե՛ մեր երկրի տարածքում եղած մի շարք ուշագրավ հուշարձանների հնագիտական հետազոտման ասպարեզում։

Իր զեկուցման մեջ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանն անդրադարձավ Հ. Օրբելու հայագիտական վաստակին։ Բեղուն ու բազմակողմանի էր Հ. Օրբելու գործունեությունը, նշեց զեկուցողը։ Որպես առաջնակարգ արևելագետ, կովկասագետ ու հայագետ նա մեր երկրի ամենահայտնի գիտնականներից էր։ Հայագիտության լավագույն դպրոց էին Անիի պեղումները։ Ականավոր հայագետի՝ Անիին նվիրված հետազոտությունները բացահայտեցին միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքի, իսկ Անբերդի պեղումները՝ միջնադարյան ամրոցի կյանքը։

Հ. Օրբելին շարունակեց ու խորացրեց հայկական միջնադարյան քաղաքում սոցիալական պայքարի վերաբերյալ Ն. Մառի քաշած դրույթը։ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակների փայլուն հետազոտությամբ նա բացահայտեց միջնադարյան հայ հասարակության մեջ սոցիալական պայքարի վառ պատկերը։ Բացի այդ, նա վեր հանեց միջնադարյան առակների գիտաճանաչողական արժեքը։ Հ. Օրբելու գիտական գործունեությունը, վերջում նշեց զեկուցողը, բնութագրվում է հնագիտական և արվեստագիտական պրոբլեմների մշակմամբ, բայց բոլոր դեպքերում նա մնում է բառիս բուն իմաստով իրրև պատմաբան, և առաջին հերթին, ժամանակի խոշոր հայագետ։ Դրա լավագույն ապացույցն է նրա «Հայկական հերոսական էպոսը» աշխատությունը։

«Հ. Ա. Օրբելին բանասեր» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հ. Հակոբյանը։ Իր գիտական գործունեության ավելի քան քառասուն տարիների ընթացքում, նկատեց զեկուցողը, Հ. Օրբելին համակողմանի հետազոտության նյութ դարձրեց հայ հին և միջնադարյան գրականության ու պատմագրության հուշարձանները և ժողովրդական վեպը, քննելով դրանք ինչպես բնագրագիտական, այնպես էլ գեղարվեստական ու գաղափարական առումներով։ Ամենից ավելի նրա ուշադրությունը կենտրոնացել է հայ միջնադարյան առակների և «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի վրա, որոնց մեջ գիտնականը հայտնաբերել է աշխատավորական խավերի ձգտումների ու տրամադրությունների արտահայտությունները և ազգային հոգեբանության այնպիսի շերտեր, որոնք համամարդկային նշանակություն ու հնչեղություն են ձեռք բերում։ Միաժամանակ Հ. Օրբելին, շարունակեց զեկուցողը, հայ գրականության որոշ հուշարձաններ ռուսերեն բարձրարժեք թարգմանությունների միջոցով դուրս է բերել միջազգային ասպարեզ։ Իր թարգմանություններին նա կցել է խորիմաստ մեկնաբանություններ, որոնք լուծում են բնագրագիտական բազում հարցեր։

Ճարտարապետական գիտությունների դոկտոր Ս. Տ. Մեցաքանյանի զեկուցման թեման էր «Ճարտարապետության պատմության հարցերը Հ. Ա. Օրբելու աշխատություններում»։ Նա ասաց, որ ճարտարապետական մշակույթը, հայկական հուշարձանները կարևոր տեղ են գրավել Հ. Օրբելու կյանքում։ Անիի նշանավոր գիտարշավը նրան ձևավորեց որպես իսկական գիտնականի, հայագետի, արվեստաբանի։ Հայկական մշակույթի ուսումնասիրության բնագավառի նշանաձողեր են Անիին նվիրված նրա գործերը։ Հ. Օրբելին առաջինն էր, որ հիմնավոր զբաղվեց հայկական խաչքարերի հետազոտությամբ։ Նրա գրչին է պատկանում հայկական ճարտարապետության պատմության ընդհանուր ակնարկը, որն առաջինն է այդ բնագավառում։ Հ. Օրբելու ստեղծագործական կյանքում արտակարգ տեղ է գրավում Աղթամարը, որին նվիրված նրա աշխատությունը սովետական արվեստագիտության գագաթներից է։

Պատմական գիտությունների դոկտոր Կ. Ն.

Յուզբաշյանն իր զեկուցման մեջ վերլուծեց Հ. Օրբելու ստեղծագործական ժառանգության ակունքները։ Նա նշեց, որ Հ. Օրբելին եղել է XX դարի հայրենական արևելագիտության, հատկապես Պետերբուրգի դպրոցի լավագույն ներկայացուցիչներից մեկը։ Նա, անշուշտ, շատ բան է յուրացրել դասական արևելագիտությունից և անտիկագիտությունից։ Շատ դեպքերում, սակայն, նա հանդես է եկել որպես ռահվիրա։ Հարուստ հիմք ունեցող ավանդականությունը և գիտական խիզախությունն ապահովեցին Հ. Օրբելու աշխատությունների և ողջ գիտական գործունեության թարմությունն ու նորությունը։

Պատմական գիտությունների թեկնածու Ջ. Ջալիլն իր զեկուցման մեջ անդրադարձավ հայրենական քրդագիտության կազմավորման գործում Հ. Օրբելու ունեցած դժվար գերագնահատելի դերին։ Նա ասաց, որ քուրդ ժողովրդի պատմության, մշակույթի ու լեզվի նկատմամբ մեծ գիտնականի տածած սերը դրսևորվել է թե բրդական բանահյուսության ու լեզվին նվիրված նրա ուսումնասիրություններում, և թե սովետական կարգերի հաստատումից հետո քուրդ ազգային մտավորականության պատրաստման ուղղությամբ նրա գործադրած եռանդուն ջանքերում։ Եվ միանգամայն օրինաչափ է այն մեծ հարգանքը, որ քուրդ ժողովուրդը տածում է նրա հիշատակի նկատմամբ։

Հայ վիմագրագիտությունը, իր զեկուցման մեջ նշեց պատմական գիտությունների դոկտոր Գ. Գ. Գրիգորյանը, համաշխարհային ճանաչման հասցրին Ն. Մարը և Հ. Օրբելին։ Նրանք մշակեցին հայ վիմագրագիտության գիտական սկզբունքներն ու մեթոդները, որոնցով մինչև այժմ առաջնորդվում են հայ վիմագրագետները։ Այդ սկզբունքներն ու մեթոդները Հ. Օրբելին շարադրեց 1914 թ. սեպտեմբերի 6-ին Պետերբուրգի համալսարանում կարդացած իր դասախոսության մեջ։ 1938 թ. օգոստոսի 20-ին նա Սովետական Հայաստանի կառավարության առաջ բարձրացրեց հայերեն վիմագիր արձանագրությունների հավաքման և գիտական հիմունքներով հրատարակման հարցը։ Դրա շնորհիվ է, որ հետագա տարիներին հավաքվեցին ու «Դիվան հայ վիմագրության» մատենաշարով հրատարակվեցին հայկական վիմագիր հազարավոր արձանագրություններ։

Գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան նաև պատմական գիտությունների դոկտոր Պ. Մ. Մուրադյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Ա. Գվախարիան և արվեստագիտության թեկնածու Ն. Ս. Ստեփանյանը։ Պ. Մ. Մուրադյանի զեկուցման թեման էր՝ «Կովկասագիտության հարցերը Հ. Ա. Օրբելու աշխատություններում»։ Ա. Ա. Գվախարիան վերլուծեց իրանագիտության, իսկ Ն. Ս. Ստեփանյանը՝ արվեստի պատմության մեջ Հ. Օրբելու ներդրած շահեկան ավանդը։

Գիտական նստաշրջանում Հ. Օրբելու մասին հետաքրքիր հուշերով հանդես եկան Ս. Տ. Երեմյանը, Բ. Ն. Առաքելյանը, Վ. Մ. Հարությունյանը. Կ. Ն. Յուզբաշյանը և ուրիշներ, իսկ Սաղկաձորում բացվեց Օրբելի եղբայրների հուշարձանը։

Հ. Օրբելու ծննդյան 100 ամյակին նվիրված գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ 275 ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 17-ին Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում տեղի ունեցավ մեծ բանաստեղծ և երաժիշտ Սայաթ-Նովայի ծննդյան 275 ամյակին նվիրված գիտական նստաշրջանի բացումը, որ կազմակերպել էին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի գրողների միությունը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը։

Նստաշրջանը բացեց Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Է. Միրզոյանը։ Մեր ժողովուրդը, ասաց նա, նշում է մեծն Սայաթ-Նովայի ծննդյան 275 ամյակը, որի արձագանքը տարածվում է մեր հանրապետության սահմաններից դուրս, երկրով մեկ։ Սայաթ-Նովան ամենամեծերի մեջ մեծն է և ամենասիրվածների մեջ՝ սիրվածը։ Նրա մասին խոսելիս ամենից առաջ պետք է անդրադառնալ Սայաթ-Նովա երևույթին։ Դանդաղ այն է, որ Սայաթ-Նովան գնահատվում և ընդունվում է որպես բանաստեղծ։ Բայց դա քիչ է նրան հատկանշելու և բնութագրելու համար։ Սայաթ-Նովան, պահպանելով աշուղական բանաստեղծության ձևերը, իր հանճարով հավասարվում է բանաստեղծական արվեստի մեծերին։ Հաջորդ երևույթը Սայաթ-Նովա կոմպոզիտորն է։ Երբ խորանում ենք նրա ստեղծագործության մեջ, պարզվում է, որ նա մեծ կոմպոզիտոր է։ Վեր աշուղականից։ Սայաթ-Նովայի երաժշտությունը ունի իր առանձնահատուկ դեմքը, ինքնատիպությունը, միայն նրան բնորոշ լեզու։ Այս առումով նա ինչ-որ տեղ առնչվում է Կոմիտասի